ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2025 թվականի N 956-Ա

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻ ԲԱԺՆԱՅԻՆ ՄԱՍՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի 16 փ., 14 տան բնակիչ Սասուն Համբարձումի Նազարյանի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումը /անձնագիր՝ AL 0532286, տրված՝ 06.12.2023թ., 057-ի կողմից/, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 17-ի N 32 արձանագրությունը.

Որոշում եմ՝

1. Սասուն Համբարձումի Նազարյանին թույլատրել կնքելու գործարք՝ իր անգործունակ դստեր /խնամարկյալի/՝ Արմինե Սասունի Նազարյանի /ծնված՝ 19.02.1983թ./ բաժնային մասով սեփականությունը հանդիսացող ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի 04-012-0148-0022 կադաստրային ծածկագրով, 0.39 հա մակերեսով հողամասը /նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, վարելահողը/ նվիրատվություն անելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 18
Արաքս համայնք